



Ա. ՀԱՏ ի Ս Օ Ս Ք

ՇԱՐԱԹ, 12 ՄԱՅԻՍ 1906, ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ



Բ Ա Ց Ն Ա Մ Ա Կ

Ա Ռ

Վ Ա Ս Տ. Ա Ր Մ Ա Հ Ա Մ Փ Ա Տ Ա Բ Ա Ր Փ Ո Ղ

Ա Ս Տ

Վսեմաշուք Տե՛ր.

Եթէ ժամանակ ունիք, պիտի խնդրեմ ձեր բարձր
 վսեմութենէն որ բարեհաճիք վայրկեան մը հեռանալ Պապ
 Սիարայի նեղ փողոցէն, շո տով մը անցնիլ Ամերիկեան
 փողոցը և առանց կանգ առնելու Շէրիֆ փաշայի պողո-
 տային վրայ գտնուած ծանօթ բարխուրնի ին առջև, ուր
 թերևս ազնուաշուք Տ. Յակոբ Ուլտրեան ձեզի կըս-
 պասէ, նոր և թարմ ապրանքներու նմոյշներ ցոյց տալու
 համար, և ուղղուիլ ձեր խոնարհ ծառային՝ ինծի հետ,
 պարկեշտ ու պատուաւոր վայր մը ուր կարելի ըլլայ հան-
 պարա պիտով քանի մը խօսք ընել:

Անօգնւտ և ապաժամ խօսքեր գուցէ որոնք սակայն
 եթէ ո՛չ ձեզի՝ գոնէ սպագայ Վսեմութիւններու կրնան օգ-
 տակար ըլլալ:

Այսպէս ուրեմն հեռացաք խնամակալութենէն, հեռա-

ցար իլև ո՛չ լա ազոյն պայմաններով: Տար կերպ կա-
րելի էր ձգել ու հեռանալ ինամակալութիւնէն և զուր այլ
սաար կերպերուն յոռեղոյնը ընտրեցիք:

Առաջին անգամ, երբ քուէարիութեամբ ընտրուած
Թաղական խորհուրդը լուծուեցաւ կամայականապէս և
տեղը ինամակալութիւնը կազմուեցաւ, զուր կրնայիք հը-
րածարիւ և պահանջիլ նոր ընտրութիւն մը: Լա ազոյն
ձեր պիտի ըլլար այս և ձեր անունը ժողովրդականութեան
բարբիտնովը պիտի պսակէր:

Երկրորդ անգամ՝ երբ ժողովուրդը եկեղեցիին մէջ,
ու առաջնորդարանի բակը, բողոքեց նորակազմ ինամա-
կալութեան վէմ, շատ պատուաւոր կերպով կրնայիք հը-
րածարական տալ, հետեելով Վսեմ. Պօղոս փաշայի օրի-
նակին, որ ինամակալութեան շէնքին կառուցանուող ըլլա-
լով հանդերձ, հեռատեսութիւն ունեցաւ անոր խախտա-
հիմերը ընդհամարելու և հաւանական փլո՞ղումի բեկորնե-
լուն տակ չմնալու խոհեմութեամբ ժամանակին հեռացաւ
անկէ: Իսկ զուր, ընդհակառակը, նախընտրեցիք օրինա-
սէրներուն պահանջումը արհամարհել և փորձեցիք ժողո-
վրդային ցոյցին պատասխանել քանի մը վարձկաններէ
սարքուած ծիծաղաշարժ մեյքսան օյիւնիով մը՝ որ փոխա-
նակ ձեր փառքը աւելցնելու, բողոքովին վարկարեկ ըրաւ
ձեզ պարկեշտ մարդոց քով:

Յետոյ պահ մը պայքարը զարեցաւ, առերևոյթ
հանդարտութիւն մը տիրեց, տեսակ մը զինազարդ:

Երրորդ անգամ լաւ առիթ մըն էր ձեզի համար պա-
տուաւոր նահանջ մը ընելու, ինքնաբերաբար ձեր հրա-
ժարականը մատուցանելով. « Ո՛ր որ անկ է, » առանց

շուկի à l'anglaise ձգել երթարու, բայց նորէն յա-
մանեցաք, բայց նորէն գիթուած, հմայուած, ժաքնխա-
ցած, չիրցաք բաժնուիլ « Աւելբառնդրից հայ հասարակու-
թեան նախագահ » տիպոտէն:

Անցած տարի նորէն ծագեցաւ ռահմանադրական
պայքարը, աւելի բռն աւելի պահանջկատ: Վրայ հասաւ
Պապ Սիարայի գայթակգութիւնը, ձեռ եղբայրակցին՝ Տ.
Յակոբ Ուղարեանի խաղբութիւնները և մոլոմուրդին համ-
բերութիւնը ալ սպանեցաւ: Չգացիք թէ ինամակալութեան
հիմերը Վստփեան երկրաշարժային ցնցում զը կրած են
և թէ ապօրինութեան շէնքը խախտած է: Եւ օսկայն նո-
րէն յամանեցաք ու ամէնէն անագնիւ, ամէնէն դատապար-
տելի միջոցները գործածեցիք ինամակալութեան հոգեվար-
քը երկարաձգելու համար: Ռահմանադրականները ծեծել
սուելք, Օրէնքի գործադրութիւնը պահանջող թերթերուն
տպարանները կոխել տուիք, փայտով, պաշտնով, ատրճա-
նակով, վախցնել ուղեցիք ինամակալութեան հակառակորդ-
ները և երբ այդ անարդ միջոցները անազգեցիկ թնացին,
չվարանեցաք ֆէօդ Նշանի զը դիմել ձեռ պատին պաշտ-
պանութիւնը իրեն յանձնելու համար...

Ձեր փոստաբարանը լու չկտարեց իր դերը և տար
համար մերժեցիք, տրացաք, լու չվարձատրեցիք
զինքը. ու ապեքախտ գտնուեցաք իրեն նկատմամբ:
Եւ երբ Դէօր Նշան վշտացած ու գտնացած ձեռ
բռնած գիրքէն, ինք որ իր տրիւնը թափած էր ձեզ
պաշտպանելու համար, սպառնացաւ ամէն բան երեւոն
հանել, օգտուեցաք ձեռ «հայ հասարակութեան նախա-
գահ»ի պաշտօնէն զինքը արտրել տալու համար Յու-
նաստան:

Ու ասանց անդի տալ ուզելու կրկին շարունակեցիք ձեր խորհրդայական քաղաքականութիւնը մէկ կողմէն Ալեքսանդրոյ հայ հասարակութիւնը եւ միւս կողմէն պատրիարքարանը սուտ ու շինծու պատմութիւններով օրօրելով:

Օր մըն ալ ատաջնորդը եկաւ, մեր դերասպատիւ Տ. Աղաւնտեւի հայր սուրբը, որուն գալատաովը իբրեւ թէ պիտի լուծուէր տեղական խնդիրը և ասհմանադրական օրէնքը պիտի գործադրուէր:

Ահա՛ լատագոյն առիթ մըն ալ որ կը ներկայանար ձեզ, գէշ աղէկ առերեսութ պատիւով մը հեռանալու համար ազգային իշխանութենէն Դարձեալ չօգտուեցաք գործեալ ուզեցիք արձամարհել ժողովուրդը, դարձեալ ոտնակոխ ըրիք օրէնքը Ու ձեր ընթացքովը պատճառ եղաք որ նորեկ ատաջնորդը, որ գուցէ Բարսեղի էր ասհմանադրութիւնը գործադրելու, ձեր ընդդիմութենէն վարանած կամ խրախուսուած, ինքն ալ ժողովուրդը խաբարէ և իր բարոյական ազդեցութիւնը կորսնցնէ անոր մօտ:

Վերջապէս, չորս շարաթ տուաջ, նոր կերակրի ցոյցը տեղի ունեցաւ: Հարիւրաւոր օրինասէրներ պաշարեցին Ատաջնորդը և այս անգամ, քիչ մը սրտմտած ու անհամբեր կորովով մը, ասօրէն ինտանակալութեան բարձու մը պահանջեցին, կծու եւ արդարացի բնագատութիւններ ընելով ազգային իշխանութեան գլուխը զըտնուող մէկ քանի անձերու ամօթալի արարքներու մասին:

Վերջին փրկութեան պարան մըն էր ասիկա ձեզի համար: Կրնայիք նոյն իրիկունն իսկ, իբր թէ ձեր մասին եղած անիրաւ քննապատմութիւններէն վշտացած ու բէն ըրած, անմիջապէս հրաժարիլ, չուզելով այլևս բարեբարիչ մեզի պէս ասպերախտ ժողովուրդի մը:

Աս ալ չըրիք:

Նորէն ուզեցիք ամբողջ հառաքակութեան մը զայրա-
 քնոտ ու ահեղասատ հեղեղին դէմ թուժք կանգնել և ձեր
 գերագոյն և յստահատական ճիգին մէջ, ամէն պտրիկշտ
 մարդիբու աջակցութենէն զրկուած, ձեր տխճօր պնակա-
 լզնեբրան հետ միս միակ, անոնց պժգալի ու պղծոյ
 գրկընդխառնումին մէջ բանտարկուած, անարգութեան ա՛յ
 յետնագոյն ատտիճաններէն վաք գլտորեցաք սւ զացիք,
 կառաւարութեան իբրև «խոտվարար» «պատարկացորտ»
 և «անօթի խաչադող» ամբատտանելու այն հառաքակու-
 թիւնը արուն նախագահելու յամաւթիւնը ունեցած էիք
 ամբողջ հրեքո կէս տարի...:

Յաջորդ շարթն ու սակայն ժողովուրդը «Օրինաորու-
 թենէ ելլելով իր իշա ունքին մէջ մտաւ» ու խնամակա-
 յութեան առաւ զճոսական հարուածը:

Վերջապէս, այո անգամ «հրաժարեցաք» հրաժարե-
 ցաք, ինչպէս վերը ըսի, ամէնէն գէշ ձեւովը, ամէնէն
 նուատաղցոցիչ պայմաններուն տակ:

Քալոր այս անցած գացած իրողութիւնները վերլիշելով ու
 այս անհոճոյ խօսքերը ձեր Վտեմութեան ուղղելով ուրիշ
 նպատակ չունիմ ոչլ ապապայ Վտեմո թիւնները զգուշացնել
 ձեր օրինակին հետեելէ, և միանգամայն ձեզ հասկցնել
 թէ այսօրտան ձեր պիրքը զուք ձեր ձեօքովը ստեղծեցիք:

Այս ճշմարտութիւնը վստահ եմ որ ձեզ շրջապա-
 տողներէն ոչ ոք պիտի ըսէր ձեզ և ասոր համար հարկ
 տեսայ այս «բաց նամակ», ս ուղղելու որուն մասին նե-
 բումն խնդրելով մեամ Օրինաորութեան և Սահմանագրու-
 թեան

Խոնարհ Մատայ

ԵՐՈՒԱՆԻ ՕՏԵԱՆ

ՈՒՍՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

ՏԱՊԱԼՈՒՄԻՆ ՏԱՄՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻՒ

1916 Ապրիլ 29. — Օր մը՝ արև արեգակ, բայց սիրտերը առ հասարակ ախորժիկ։ — Տասնամեակը՝ բարերար ինամակալութեան հեղաշուտաչ տապալումին։ Աղերսանդրիոյ մէջ մեծ իրարանցում։ — Լալկան կիներու անսահման բազմութիւն մը, նոր Վէրիբր—իւլ — Վիլզերա անուանուած ստրուսիազանց Բարթոլ փաշայի փայլատակոյ ապարանքին շուրջ։ Ամէն կողմ սև լաթեր են քաշուած, նոյնիսկ Արթինօֆի որ փաշա եղած է իր մեծաւորին յատուցած քանի մը շատ կենսական ծառայութիւններուն համար, — այս՝ նոյնիսկ Արթինօֆ փաշայի երեսը սև լաթ է ծածկուած։

Երբեմնի հացկատակներ, հիմա պէյ եղան, սպիտակ ձեռնոցներ ի ձեռին, որ վերէն վար վայելուչ զգեստաւորուած կ'երթենկէին մեծ իրարանցումով։ —

Աւ ամէն ոք կը փախայ։ —

• Բարթոլ փաշայի դէմ եղած դաւադրութեան՝ տասնամեակն է այսօր. հիմա ուխտի պիտի երթանք։

Մայրը զաւկին կը բացատրէ օրուան ո՛ր աստիճան նշանակիլի հանգամանք ունենալը, պառանները իրարս մէջ կը խորհրդակցին, երիտասարդները մեկուսի բանախօսութիւններով վեր կը հանեն այն պատմական ահեղ ներգործութիւնը զոր ունեցած է մարդկային ճակատագրական բարեշրջումին վրայ, սառը տարիներ առաջ կատարուած խորտակումը Բարթոլեան անանուն կոթողին։

Երբ յանկարծ զուրս կը ցատկէ խորտա կերպով մը, Վ.Լգիր իւլ Վ.Ի զԼրային առաջին թարգման համարատոր շեշտազատ Ուղուրեան փաշա. հրահանգները կը արտին ելեքարական արագութեամբ ու ահա ուխտագնաց թափօրը կը կազմուի:

Նախկին խնամակալայետը յամբ քայլերով վերէն վար զինուած փաշիտին օսմանհարն ապահեկուս պատուանշաններով, կը յառաջանայ զանդադարայլ, շուրջը կը բոլորին հրեք նորընտիրները, Թէլեան Պէյ, Բիւրատ Պէյ ու Ամատունի Պէյ, որոնք ետտեայ ամպհովանի մը կը բռնեն Վէկիր իւլ Վ.Ի զԼրային գլխուն վրայ հանճարասոյց ու խորաքնին ճակատը պաշտպանելու համար կիզեչ արեգակին աղպեցո թենէն, մինչդեռ զէպի ձախ կը տեսնէր Ալլաունունի Արքեպիսկոպոսը, սր թէկ Պոլսոյ պատրիարք, բայց մասնաորարար եկած է ասոնկու մեծ սգահանդէս: Այսանուսնի Արքեպիսկոպոս մէկ ձեռքը հաստ մոմ մը որ հովէն մարած է, իսկ մի ս ձեռքը լայնամէջ բուովար մը, կը խնկարկէ քիթը Լարթոյ փաշային:

Ետեւն ազատաճոխնչ ալմկոցներ ետեւն նորէն Պէյեր, նորէն Փաշաներ, ետեւն եռաձայն լալիան կիւրեր, յետոյ երախտապարտներ, յետոյ շամպոք—մէսպլէի և բաթիւսըրի տէրեր, որբեայրիներ, Հայեր, Յոյներ իտալացիներ, Արաբներ, անձայրածիբ բազմութիւն փաշայապաշտ հերոսներու...

Թափօրը սխաւ յառաջանալ զէպի Շէրիֆ—փաշա: Իրարանցումն ու զեռումը կը շատնային: Անթել թէկէֆօններ աշխարհի չորս ծայրը կը հաղորդէին օրտան մեծ զէպքը: — Ու փաշան կը փքանար ի տես այն անճառելի

պատկանելիութեան որ իր սև սաթի գոյն ներկուած մազերը կը բոցբոցէին...

Ալհամպրա թատրոնին տեղ, տասը տարի առաջ պարայ եղօղ հողին վրայ հիմա կառուցուած գեղեցիկ շէնքին առաջըը հասնելուն թափօրը պահ վը կանգ առաւ ու Արքեպիսկոպոսին բուռվարը վայրկեան վը դարձաւ խունկ տալու շէնքին ճակատին մարմարին արձանագրութեան. —

“ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

ՀԻՄՆՈՒԱԾ

ՎՍԵՄ ԱՐԱՆԱՄ ՓԱՇԱ ԲԱՐԹՈՂԷ

1906 ԱՊՐԻԼ 29Ի ՀԵՏԵՒԵԱԼ ՕՐԸ

ԾԱՍԻԻՔ ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՀԻՆԳ ՀԱԶԱՐ ՈՍԿՈՎՔ

ԱՆԳՂԻԱԿԱՆՕՔ,”

Թափօրը անցաւ յետոյ Պապ — Միարայէն, Լեմբրիկեան փողոցէն, Աթմարինէն, Ապու տարատրէն, և հասաւ վիրջապէս Պօլոս Պետրոս եկեղեցին, հոն է որ օրօտան պատշաճ սպանաոր արտասանեց թէկեան Պէյ և ստորագծեց տխրօ թիւնը ահաւոր տանամեակին: —

Փաշան կուլար բարձրաձայն Աղանունի Արքեպիսկոպոս, կը հեկեկէր, կը տքար, թէկեան Պէյ աչքերը կը շփէր, Ա՛յաւտոնի Պէյ սև փողկապներ կը բաշխէր աղբաններուն, Բիւրատ Պէյ կը խնդար մտքէն, Արլինօֆ բաշա որբեւայրիները կը լիխթարէր...

Բայց յանկարծ, ո՛վ, տաժանելի ճակատագիր, հանդէսը որ մինչև ան ատեն շատ լաւ էր անցած, զժբախտ վերջ մը ունեցաւ: Եզիպտական ծանօթ, փառասոր, զերձանաշար անձրեւը եկաւ լուալ սովէնքը մէկանց...

ԱՐՄԷՆԻՍՅՈՒՆ Ի ԿՊԱՍՏ

Մինչամ շարժու, սահմանադրական պայ-
 րարին իրարանցումին մէջ՝ մոռցանք յիշել այն
 սիրուն երեկոյթը որ նախորդ շաբաթ իրիկուն
 ամբողջ ունեցած էր Տիգրան Երկաթ միութեան
 ժողովարահին մէջ ի նպատակութեան «Armenia,
 հանդէսին» Երկսեռ խումուն բազմութիւն մը փու-
 թացած էր ներկայ գտնուիլ և քաջալերել հայա-
 սէր թերթը որ մօտաւորապէս երկու տարի է ի
 վեր հայ ազգը և հայկական խնդիրը Ամերիկա-
 ցիներուն ծանօթացնելու օգտակար դերը կը
 կատարէ:

Տ. Լեւոն Մկրտիչեան գեղեցիկ ու սուսմիտ
 բանախօսութեամբ մը բացատրեց հայ ազգը օ-
 տարներուն ծանօթացնելու օգուտները մեր դա-
 տին համար և այդ մասին եզած շանքերն ու
 ձեռնարկները յիշեց: Շատ յաջող անցաւ Շանթի
 «Սի մարդը» թատերախաղը զոր ներկայացուց
 ամաթէօրներու խումբ մը: Նմանապէս շատ յա-
 չող էր երեկոյթին երաժշտական մասը: Նիւ-
 թական յաջողութիւնն ալ նոյնապէս խիստ գոհա-
 ցուցիչ եղած է, քանի որ զուտ հասոյթը կը
 հասնի 60 ոսկիի, միասին հաշուելով Տ. Բարսեղ
 Օհանեանի տասը ոսկիի նուիրատուութիւնը:

Սոյն երեկոյթի յաջողութեան մէջ անշուշտ
 մեծ բաժին մը ունի Տ. Գառնիկ Չպուքճեան,
 Թուամվալի ընկերութեան համակրելի տնօրէնը,
 որ հանդէսը հովանաւորած էր:

ՀՐԵՆՆԻՆՆԵՐ - ՏԱԿ ՄԻԹԻՆԿԸ

Կիրակի օր, առտուան ժամը տասնուկէսէն տասնեւ-
 Կոք, Նախախնամութիւնը երկնքէն յորդառատ անձրևով
 մը և Տ. Միհրան Տաժատեան Աշխատարարի բեմէն պեր-
 ճախօսական հեղեղով մը, անգամ մըն ալ լուս-
 ցին սպօրէն խնամակալութիւնը և վերջնական
 լուացք այս անգամ, խնամակալութեան զիակը
 պատանքիէ ու զագաղը զրուելէ առաջ կատար-
 ւած:



Բարեբախտաբար այս արարչութիւնը որքան ալ
 մեռելական, խիստ զուարթ ու հաճելի պայմաններու
 մէջ տեղի ունեցաւ: Հազար հոգիէ աւելի բազմութիւն մը
 լեցուած էր Աշխատարար թատրոնին բնօրհան սրահը, իսկ
 օթեակները ամէնքն ալ լեցուած էին սահմանադրական և
 օրինասէր հայ ընտանիքներով: Մտփերու տհաճ պա-
 շար մը կար ամէնուն ձեռքին մէջ որ ամէն վայրկեան լիա-
 ռատ վատնուելով հունդերձ, մինչև վերջը բաւեց և նոյն-
 իսկ շատերու քով աւելցաւ: Հայկական նուագախումբը
 այնքան եռանդով ու յափշտակութեամբ սահմանադրու-
 թեան քայլերը հնչեցաւ, սր երբ նուագածուները, երբ
 աւարտելուն իրենց գործիքները վար զրին, անոնք շարու-
 նակեցին «Արիք հայկազունք» ը հնչեցնել, կարծես սրահին
 մէջ տիրող խանդավառ կենդանութենէն ոգի առած:

Բեմին վրայ, սահմանադրական սլայքարին հնագոյն,
 հին, նոր և նորագոյն պետերը՝ Բարսեղ Շահպազ, Եղ-
 ուարդ Թարշուճեան, Երուանդ Օտեան, Լեւոն Լարենց,
 Կարապետ Տերվիշեան, Միհրան Տաժատեան, Յակոբ

Պէքարեան, Յակոբ Փափազեան, Յովհաննէս Ենարեքեան,
 Դաւարշ Հովհեան, Չայլաբեան և Պիարոս Պերպլեբան
 նստած էին ո՛չ այսօրեանական կարգով, թէև Ճենք հոռ
 զիրենք այսօրեանական կարգով նոտեցնել աւելի օրինաւոր
 համարեցինք: Բացաւայ էր միայն Տ. Սմբատ Բիրատ,
 հիմնապիրտնօրէն ռահմանազրտական պալլարին, այժմ
 տնօրէն միայն Պօլտեան վարեարանի: Բացակայ էր նաև
 «Ազատ Խօսք»ի համակիրներէն Տ. Յակոբ Ուզուրեան,
 որուն բացակայութիւնը այնքան աննշմարելի էր որքա
 Սահարայի անապտին մէջ ափ մը աւազի պակասը:

Հոս էր գնեց Յ7 թուահամար կրող պաշտօնագիրը
 դոր Տ. Տամատեան կարգաց որով Գեր. Աղանունի Մ.
 վարդապետ ընտրութեան սրտում տրուելը կ'իմացնէ.

«Միրելի Ժողովուրդ

Ներկայի» կուգամ յայտնել քաղաքիս
 Սզգայնօց թէ որոշած եմ տեղիս
 Թաղ. խորհրդոյ նոր ընտրութեան
 Չեանարիել բատ սահմանադրութեան:
 Չայս հազորպելով ի գիտութիւն
 Էր ծանօցանեմ ձեզ ամենեցուն
 Թէ պիտի զբաղիմ վաղունէ սխելով
 Ընտր. գործերու պատրաստութիւնով:

Տ. Մ. Տամատեան իր բանախօսութիւնը աւարտեց
 սրտաընդատ ծավահարութիւններու մէջ: Հայկական նօա-
 գախումբը կրկին հնչեցուց Սահմանադրութեան քայլերը
 և յետոյ կատարուեցաւ ժողովրդեան երեք պատգամաւոր-
 ներուն ընտրութիւնը:

Ընտրուեցաւ,
Տ. Յ. Շնորհքեան
Տ. Մ. Տամատեան
Տ. Ե. Թուրշուճեան

Միթիւնիւր էր գործը. անսած էր, եւ խնամակալու թիւնը ընդունած էր վերջնական, երթան բարով ը որուն վայրկենական լուսանկար, պատկերը հոս կերեայ ուստի փակուած յայտարարուեցաւ և բազմութիւնը գոհ և յաղթական մեկնեցաւ:



ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Բարիդէն մեզի կը գրեն.

Քաղաքիս հայ գաղութին կողմէն պաշտօնավարութիւն մը Պ. Բլէմանսոյին ներկայանալով, շնորհաւորեց ներքին գործերու նախարարութեան պաշտօնը: Միանդամայն թարգման հանդիսացաւ Հայոց երախտագիտական զգացումներու առ հայակապ պեփտկան անձնավարութիւնը: Նախարարը անգամ մը ևս հաւաստեց հայակապ գատին իր բարեացակամութիւնը: Տաս տարիէ ի վեր թէ զըշով թէ խօսքով օրապի ու իտրհրդարանի բեմէն, Ճըրանոական նախարարութիւնները խստիւ կշտամբած ու պատապարտած է իրենց անտարբեր հանդիսատեսութեանը համար, հանդէպ թրքական վայրագութիւնաց:

Պ. Բլէմանսո յոտադրեց թէ, հայոց վիճակին բա-

տելամանը համար իր հոգածութիւնը վերստին շարունակէ, երբ նախարարական ծանրագրագ պաշտօնէն ազատագրուելով, օրագրողի գրիչը վերստին ձեռք անէ:

Այս յայտարարութիւնը բերկրապատար ուրախութեամբ չեցուց հայ պատգամաւորները, որոնք փութացին « իրենց շնորհակալիքը կանխաւ մատուցանել » ըստ քնկալեալ բանաձեռի:



Գահիրէն կը հռաձայնեն.

Ազապալի սպանուելից խնդիրը որ հին աւ նոր աշխարհները հե աշունչ կը պահէ հաւանորէն, անակնունելի վերջաւորութեամբ մը ընդհանուր մարդկութիւնը պիտի ուրախացնէ, արժանք զարժանք պատճառելով միանպագայն:

Լոնտօնէն Լորտ Քրոմբին արտիպողաբար զարնուած հեռագիր մը կը հաղորդէ սուլթան համիտին բարեացակամ տրամադրութիւնը. Ազապալի խնդրին մէջ Անգլիոյ բոլոր պահանջաւորները ընդունելի պայմանաւ որ Անգլիան ալ իր կողմէն զիջում ընէ Բարթոյ Փաշայի խնդրին մէջ, ինամակալութիւնը անձեռնմխելի պահելով:

Բանտկցութիւնները կը շարունակուին Գահիրէի, Էգիպտոսի և Պալոյ միջև:

(ԾՆՆՎ.) Այս տեղեկութեամբ կը հաստատուի ԱՁԱՏ ԲԵՄԻՆ այն ցնցողական լուրը, թէ Բարթոյ Փաշային տապալման հրատապ հարցը Անգլիոյ համար երկրորդ Ազապալի խնդիր մըն է: — (կատարեալապէս)

Յ. Գ. Վերջին պահուն կիմանանք թէ Լորտ Քրոմբին խորհուրդներուն վրայ, Անգլիական կառավարութիւնը

իր շահերուն աւելի նպաստաւոր կը համարի Ազապայի խնդրին առթիւ Թիւրքիոյ, հետ կա՛մ սուլթանին պահանջումներուն տեղի տալ, քան թէ Աղեքսանդրիոյ Ազատականներու յաղթանակը վտանգլ. քանի սը այժմ Անգլիոյ կառավարութեան զլսիւն ալ «Ազատականները», կը գտնուին: (կա՛տարելապէս :

Այսպէս ահա, ինչպէս իրաւամբ զիտել կատայ Ազատիեմ «առաջին անգամն է որ Անգլիական զիւանագիտութեան շահերը սփիւ կը համեմատին հայ ժողովրդին «շահերուն հետ»:

ԱՌՁԵՌՆ ԼՈՒՐԵՐ

Օրմանեան Պատրիարքը մեծ-ցոյցին գոժը առած չառած, Առաջնորդ հայր սուրբին կը շնորհը « օրացոյցն ալ չի նայեցար», խեղճ Աղանունինս, անմիջապէս օրացոյցը գրպանէն կը հանէ, եւ՛, յի կիրակի օրուան համար՝

Այդ կիրակին խաւար ըլլայ

Ու Աստուած չփնտրէ զանիկայ վերէն,

Ու երբէք լոյս չճագի անոր վրայ:

Երկրապետները աչքէ անցնելուն պէս, երկու ձեռքը գլխուն զարնելով կ'աղաղակէ

— Վա՛խ, վա՛խ, վա՛խ, սա՛՛ երազահանին մէջ փնտրելուս տեղը որ օրն բարի է թէ չար, բնոր՝ խելք չբրի՛տէ, մէյբը սա օրացոյցը չնայեցայ: Աս բաներէն մէկը չէր ըլլար: Ետքէն հիւանդանալու տեղ, խելք կ'ընէի առաջ կը հիւանդանալի:

Օրացոյցը այդ կիրակիին բով զրամ էր. «Կարմիր կիրակի»:

ԿԱՐԵՒՈՐ

Այն անձերը որ «ԱԶԱՏ ԽՈՍՔ» ի 1. և 2 թիւերը
ընդունած և Refusé չեն բրած՝ իբրև բաժանորդ պիտի
նկատենք:

Քանի մը անձեր, մուրուլթեան վայրկեանի մը մէջ,
մեր թերթը մերժած և վերադարձուցած էին. առանց սա-
կայն իրենց անունն աւ հասցէն յայտնելու: Ի զու՛ր պակ-
շա նետող արար կիներու զիմեցինն հասկնալու համար թէ
ովքե՛ր էին նրանք, որպէսզի այլևս թերթ չըրկենք: Այ ոք
որոշ բան մը կըրցաւ ըսել: Արդ միանգամ, հոս ընդմիշտ
դիտել կուտանք ընթերցատեաց հասարակութեան թէ, բոս
ասոճանապարտիան օրէնքին, երբ մէկը խերթ մը մերժէ և
խմբագրութեան վերադարձնէ, պէտք է իր անունն յայտնէ
որպէսզի խմբագրութիւնը գիտնայ թէ ո՛վ է թերթը մերժողը:

“ ԱԶԱՏ ԽՈՍՔ ,, Ձեռն-Բէ ԿԸ ՎԱՃԱՌՈՒՄԻ

Ալեքսանդրիայ՝ Տ. Յ. Ղազարեանի բով և Շէրիֆ
Փաշա լրագրավաճառ Տ. Թեյլալեանի խանութը.

Գահիրէ՝ լրագրավաճառ Տ. Հունկի և Կոլտըն Քեօշքի
բով և « Լրաբեր » թերթի ցրուիչին մօտ:

Նախորդ շաբթուան թիւերը կը վաճառուին կրկին
գինով:

“ ԱԶԱՏ ԽՕՍՔ ”, Ի Պատմաները

- ԱԶԱՏ ԽՕՍՔ - ԿԵ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԸՄԲԱԾ ՕՐԵՐԸ
Եզիպոսի համար բաժնեգինն է

40 ԹԻԻԸ 40 ՂՐԵ. ՈՂՋ
20 ” 20 ” ”

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ԵՒՐՈՊԱ	40	ԹԻԻ	10	ՖՐԱՆՔ
ՌՈՒՍԻԱ	”	”	4	ՐՈՒՊԼԵ
ԱՄԵՐԻԿԱ	”	”	2	ՏՈՒՐ

Բաժանորդագրուքիւնը կանխիկ

ՀԱՏԸ 1 ՂՐԵ. ՈՂՋ

“ ԱԶԱՏ ԽՕՍՔ ”, Ի համար բաժնեգին կամ
որ և է գրութիւն պէտք է ուղղել հե-
տևեալ հասցէին՝

K. Nazarethian

Rue Stamboul

ALEXANDRIE, (EGYPTE)

Մանուցումներ կընդունուին մանաւոր
պայմաններով:

Պատասխանատու - Խմբագիր Ե. ՕՏԵԱՆ

Տպգր. Փոքր. Գ. ՆԱԶԱՐԵԹԵԱՆ Ալեքսանդրիա